

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«_30_»_01_2019 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը , ի դեմս աշխատակազմի ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նաիրա Այվազյան-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Նյարդային համակարգի ինտեգրատիվ,պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 144699,0 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն վեց հարյուր ինսունհինը հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 144699,0 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն վեց հարյուր ինսունհինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ- ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄՍԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ


ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011024115
ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի
ինստիտուտ ՊՈԱԿ

Ք.Երևան, Օրբելի եղբայրերի 22
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900018005620
ՀՎՀՀ 00008543

Նախագահ՝ Ռ.Սարգսյան



(ստորագրություն)



Տնօրեն (ռեկտոր)՝ Նաիրա Այվազյան



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան)

(անուն պզգանուն)

Հավելված 1
« 30 » 01 2019 թ.
N Կ-16 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն (ոեկտոր) Նաիրա Այվազյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 25 » հունվարի 2019 թ. N Կ-16 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 144699 (մեկ քառասունչորս միլիոն վեց հարյուր իննսուսինը հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Նախագահ՝ Օ. Մարտիրոսյան



Կազմակերպություն

Տնօրեն (ոեկտոր)



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական
բյուջե:
2. Աշխատանքի նպատակը Կիրառելով այժմեական նուրբ էլեկտրոֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ, շարունակել ուսումնասիրել նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական, շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմները:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:
4. Աշխատանքի բովանդակությունը:

Հիմնարար հետազոտություններ.

Ցածրակարգ ողնաշարավորների շարժումների կառավարման ուսումնասիրությունը հանդիսանում է ԿՆՀ լաբորատորիայի հիմնական ուղղությունը: Ցանցա-, անդաստակա- և ռուբրո-ոդոնոլոգիային ուղիները ուղեղաբնի նեյրոններից սկիզբ առնող գլխավոր վայրընթաց պրոեկցիաներն են: Դրանցից ամենահինն է ցանցա-ոդոնոլոգիայինը: 2019 թ. կշարունակվեն 2017 թ. սկսված ոդոնոլոգի պարանոցային և գոտկային հատվածներում վերջացող ցանցա-ոդոնոլոգիային նեյրոնների հետազոտությունները՝ ի պատասխան ուղեղիկի աուրիկուլյար հատվածի գրգռման: Կատարվող փորձերով հնարավոր է ավելի մանրամասն պատկերացնել օրգանիզմի շարժումների կառավարման մեխանիզմները: Գրականության մեջ այդպիսի հետազոտությունները բացակայում են: Հետազոտությունները կատարվում են գորտի պերֆուզացվող ուղեղի վրա, նեյրոնների ակտիվության ներբջջային արտածման մեթոդով: Մտացված արդյունքները, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեն էվոլյուցիոն զարգացման տեսանկյունից:

2019թ. առնետների փորձարարական մոդելների վրա կշարունակվեն նյարդա դեգեներատիվ (ՆԴ) հիվանդությանների [Պարքինսոնի (ՊՀ) և վեստիբուլային վնասվածքի (ՄԼ- միակողմանի լաբիրինթէկտոմիա)] զարգացման մեխանիզմների բացահայտման արդիական խնդիրներն ու նրանց գործառույթների վերականգնման խնդիրները տարբեր էկզո- և էնդոգեն ծագման կենսամոդուլյատորների միջոցով: Հետազոտության նպատակն է ընդլայնել խանգարված գործառույթների նյարդապաշտպանիչ և վերականգնողական մեխանիզմների բարելավման և բուժման մասին գիտելիքները: Նախատեսվում է ուսումնասիրել հիպոկամպի և Դեյտերսի վեստիբուլային կորիզի նեյրոնների նեյրոնային մեխանիզմները նշված նյարդադեգեներատիվ հիվանդությունների դեպքում: Նրանք կարող են նաև օգտակար լինել բժշկական այն միջոցների մշակման ժամանակ, որոնք կնպաստեն ախտահարված ֆունկցիաների վերականգնմանը: Հետազոտությունների իրականացումը կապահովեն լաբորատորիայի հինգ աշխատակիցները: Կլիրաովեն էլեկտրաֆիզիոլոգիական /ներ և արտաբջջային /գրանցման, նեյրոմորֆոլոգիական և հիստոքիմիական մեթոդներ:

Նախատեսված ՊՀ մոդելի վրա մեկական նեյրոնների դրողղ և արգելակիչ սինապտիկ պրոցեսների հարաբերակցության ուսումնասիրությունը գլխուղեղի հակացավային կենտրոններում՝ ներկայացված հարջրանցքային գորշ նյութով (Periaqueductal Gray), Կարի մեծ կորիզով (Raphe magnus), Կապույտ բծով (Locus coeruleus), թալամուսի հետին-փորոքակողմնային կորիզով (VPL), գլխուղեղի կեղևի S1 և SII գոտիներով: Փորձերը իրականացվելու են միկրոէլեկտրաֆիզիոլոգիական և մորֆոհիստոքիմիական մակարդակներում: Վերջին տարիներին հատուկ նշանակության է արժանացել նեյրոդեգեներատիվ հիվանդների (ՆՀ) մոտ հատկապես ՊՀ-ի քրոնիկ ցավը, և ցավը որպես ոչ շարժիչ վաղ դրսևորվող սիմպտոմ: ՆՀ պրոգրեսիվ աճում են և նրանց պատճառով աշխարհում մահանում են ավելի շատ մարդիկ: Անհայտ է, ներգրավվում են արդյոք նեյրոդեգեներացիայի մեջ ցավ հարուցող հականոցիցեպտիվ կառուցվածքները որոշ սպեցիֆիկ ՆՀ-ում, որի հետ կապված բացակայում են հասանելի բուժական մարտավարությունները: Անհրաժեշտ է ցավը կարգավորող անտինոցիցեպտիվ կենտրոնների ախտաբանական գործունեության ապացույցներ, որոնք նպաստում են քրոնիկական ցավի զարգացմանն ու պահպանմանը՝ հատկապես ՊՀ և Ալցհայմերի հիվանդության ժամանակ: Աշխատանքի իրականացման համար պետք է համակարգիչ:

Ալցհեյմերի հիվանդությունը տարիք-կախյալ նեյրոդեգեներատիվ հիվանդություն է [Prince M. et al., 2016], որի վաղ ախտաբանական երևույթներից են հիմնային խոլիներգիկ նեյրոնների և նրանց պրոյեկցիաների ֆունկցիոնալ խանգարումը և կորուստը [Dastmalchi K. et al., 2007]: Հայտնի է *Teucrium polium* (Մարիամախոտ) դեղաբույսի նյարդապաշտպան ներուժը [Simonyan K., Chavushyan V., 2016]: Նախատեսվում է ուսումնասիրել Ալցհեյմերի հիվանդության կենդանական մոդելում *Teucrium polium*-ի նյարդապաշտպան արդյունավետությունը հիմնային խոշորաբջիջ կորիզ-հիպոկամպ-նշահամալիր նյարդային ցանցում: Գիտակիրառական նշանակությունը՝ 1) β ամիլոիդով հարուցված նյարդադեգեներացիայի խոլիներգիկ մեխանիզմների հիմնավորում, 2) Ալցհեյմերի հիվանդության դեպքում *Teucrium polium* դեղաբույսի ներուժի գնահատում: Ուսումնասիրել ամինոթթու Տաուրինի և Արցախյան բուսահավաքածուի մեկուսի և համակցված կիրառման ազդեցությունը առնետների սիրտ-անոթային և շնչառական համակարգերի ֆիզիոլոգիական վիճակի վրա նորմայում և հուզումա-ձայնային ստրեսի ազդեցության պայմաններում:

Բարձր մահացության ցուցանիշները, ինչպես նաև սոմատիկ հիվանդությունների առաջացումը պահանջ են դնում ավելի մանրամասն ուսումնասիրել ալկոհոլային ինտոքսիկացիան և վերջինիս հետ կապված բոլոր բարդությունները: Հաշվի առնելով տատրինի վերաբերյալ, արտասամանյան գիտնականների ուսումնասիրությունները գալիս ենք այն եզրահանգման, որ տատրինը կարող է հանդիսանալ օգնող սուբստանտ կանխարգելելու այն բոլոր մորֆոլոգիական փոփոխությունները, որոնք կապված են վերջինիս վնասակար ազդեցությունների հետ: Հաշվի առնելով Պարկինսոնի հիվանդության (ՊՀ) տարածվածությունը ամբողջ աշխարհում, հետազոտության անհրաժեշտությունը և արդիականությունը, լաբորատորիայում ծավալվեն են գիտական հետազոտություններ ՊՀ կանխարգելման, բուժման ուսումնասիրման վերաբերյալ: Շարունակվելու են հիպոկամպի, երկնագույն բծի և սև սուբստանցիայի նեյրոնների աֆերենտ ուղիների բարձր հաճախականությամբ գրգռմամբ համեմատական միկրոէլեկտրոֆիզիոլոգիական հետազոտությունները առնետների մոտ ինչպես ինտակտ, այնպես էլ ալկոհոլային ինտոքսիկացիայով ու տատրինի ներարկումով: Ինչպես նաև կգրանցվեն սև սուբստանցիայի, *globus pallidus*-ի արտաբջջային, սպայկային ակտիվությունները ՊՀ ռոտենոնային մոդելի վրա, ինչպես նաև կհամադրվեն գալարամինային պաշտպանությամբ: Օնլայն ստացված արդյունքները կվերլուծվեն հատուկ մշակված ծրագրով: Վիճակագրական գնահատականի և հուսալիության բարձրացման համար կօգտագործվի Ստյոդենտի t-չափանիշը, իսկ ոչ պարամետրիկ վերիֆիկացիայի ստուգման համար՝ Վիլկոկսոնի երկրնտրանքային չափանիշը:

Նախատեսվում է ակտիվ շարունակում որպես նախաձեռնություն սկսված ուղեղի ճանաչողական գործառնության ռեզերվի բազմագործոն մորֆոլոգիական եղանակով չափելու մեթոդի մշակման աշխատանքները: Հետազոտության հիմքում ընկած են Քանակական Ֆունկցիոնալ Կազմաբանության մեթոդոլոգիայի սկզբունքները: Լաբորատորիան շարունակելու է աջակցել ինստիտուտի այլ լաբորատորիաներին հետազոտությունների կատարման գործում, ինչպես նաև մեթոդապես օգնելու է տարբեր կազմակերպությունների աշխատակիցներին:

Հստակ արտահայտված պեյսմեյկերներով Հարթ մկանային օրգանի օրինակ է հանդիսանում վերին միզատար ուղղիների միզածորանային շրջանը, որի պիելոուրետեռային հատվածը օժտված է էլեկտրական ռիթմը գեներացնելու ունակությամբ: Միզապարկի հիմնական գործունեության (միզարձակում) իրականացումը որոշվում է գույզ օրգաններ հանդիսացող միզածորաններից մեզի մուտքով: Այս փաստի հետ կապված չի կարելի բացառել միզածորաններից յուրաքանչյուրի որոշակի ազդեցությունը միզապարկի էլեկտրական ակտիվության վրա: Եվ Իսկապես, այս օրգաններից յուրաքանչյուրը, բնութագրվելով սեփական էլեկտրական ռիթմի գենեզի ինքնավարությամբ[10,16], այդ պայմաններում ընդունակ է ներգործություն ունենալ միզապարկի ֆունային էլեկտրական ակտիվության ցուցանիշների վրա[4,7]: Ելնելով վերը նշվածից անկասկած որոշակի հետաքրքրություն է առաջացնում միզապարկի և միզածորանների էլեկտրական ակտիվությունը որոշող գործողության պոտենցիալների բնութագրերի փոխազդեցության ուսումնասիրումը: Ծրագրվում է ուսումնասիրել վերը նշված օրգանների ինքնաբուխ էլեկտրական ակտիվության բնութագրերը, անցկացնել ռիթմոգենեզի ստացված պարամետրերի համեմատական վերլուծություն, ինչպես նաև բացահայտել այդ օրգաններից յուրաքանչյուրի ազդեցության բնույթը հարևան օրգանների ակտիվության վրա:

Կենդանական ծագման թույները հանդիսանում են բարձր յուրահատկություն ունեցող հումքային ռեսուրս, որպես ելանյութ դեղորայքային պատրաստուկների, ախտորոշիչ և կոսմետոլոգիական միջոցների մշակման համար, ինչպես նաև հանդիսանում են հետազոտական գործիքներ կենսաբանության և բժշկության ոլորտներում: Հիմնարար հետազոտությունների արդյունքները օգտագործելի են մարդու ֆիզիոլոգիայի, իմունոլոգիայի և բժշկության մեջ, իրանում են դեղագործության զարգացումը: 1. Նատիվ թույնի և արգելակված ֆերմենտներով թույնի ազդեցությամբ առնետի ուղեղի վնասման ինչպես նաև նեյրոդեգեներատիվ գործընթացների զարգացման դեպքում վնասվածքի քանակական գնահատման մեթոդի մշակում՝ հիմնվելով միկրոգլիալ բջիջների body size/cell size հարաբերության վիճակագրական մշակման վրա (հյուսվածքաբանական կտրվածքների համար օգտագործելով ImageJ ծրագիրը): 2. Առնետների մոտ հեմոռագիկ ինսուլտի մոդելավորում՝ գյուրգայի թույնի ներուղեղային ներարկման միջոցով (թույնի ստերեոտաքսիկ ներարկման մեթոդ): 3. Համատեղ հետազոտությունների շարունակություն ԿՆՀ-ի գործառույթների փոխհատուցման լաբորատորիայի հետ, կապված Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա արգելակված ֆերմենտներով թույնի ազդեցության դեպքում նեյրոնային ակտիվության ուսումնասիրության հետ (էլեկտրոֆիզիոլոգիական և հիստոքիմիական մեթոդներ):

Կիրառական հետազոտություններ.

➤ ***Գյուրգա և այլ Էնդեմիկ օձերի թույնի դեմ հակաթույնի արտադրություն և հարակից պրոդուկտների մշակում***

Գալիք 2019թ. մենք պլանավորում ենք գյուրգայի և հայկական իժի թույնի դեմ մոնոկլալենտ հակաթույնների Fab և F(ab2) իմունոլոգիական տարատեսակների ստացումը խոյերի իմունիզացիայի միջոցով, շարունակել գյուրգայի թույնի դեզինտեգրին՝ օբտուսատինի ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունը որոշ քաղցկեղների դեպքում, ինչպես նաև պարզաբանել և գնահատել երեք տեսակի իժերի (*Macrovipera lebetina obtusa*, *Montivipera raddei*, *Vipera latifi*) թույնի ազդեցության բնույթը մարդու արյան էրիթրոցիտների ստվերների վրա և մի շարք հյուսվածքային կուլտուրաների աճի և ֆունկցիայի վրա: Բացահայտվել է *Macrovipera lebetina obtusa* և *Montivipera raddei* օձերի թույնների նյարդակաթվածային ազդեցությունը առնետների նյարդամականային կոմպլեքսի վրա: Էլեկտրոֆիզիոլոգիական մեթոդների կիրառմամբ ցույց է տրվել, որ սույն օձերի թույները բացի դասական հեմոռագիկ ազդեցությունից ներգործում են նաև նյարդային համակարգի վրա՝ փորձարարական կենդանիների վրա առաջացնելով նյարդամականային կաթված: Գալիք տարվա հետազոտության նպատակն է լինելու նաև ուսումնասիրել *in vivo* որոշ բուսական մեզվածքների բուժիչ ազդեցությունը սարկոմա S-140 բջջային գծի վրա: Նաև իրականացվելու են հետազոտություններ վերոնշյալ դեզինտեգրինների և թույնների ազդեցության կինետիկ պատկերի պարզաբանման ուղղությամբ Ռուսաստանի Ակադեմիայի Շեմյակինի և Օվչիննիկովի անվան կենսաօրգանական քիմիայի ինստիտուտի (Մոսկվա) հետ միասին, օգտագործելով իրենց նյութատեխնիկական բազան:

➤ ***Բժշկական սարքաշինություն***

Տվյալ պահի դրությամբ անցկացված գիտա-տեխնիկական աշխատանքները բերել են «Բիոսկոպի» նոր մոդիֆիկացիայի մշակման, որը օժտված է ավելի բարձր զգայունությամբ, թույլ է տալիս իրականացնել գրանցվող ազդանշանների ձայնագրում ներկատուցված հիշողության քարտի վրա և վերահսկել սարքավորման աշխատանքը ինտերնետ կապի միջոցով: Այդ ամենը իրատեսական է դարձնում Երևան քաղաքի մի շարք կլինիկաներում իրականացնել նախնական հետազոտություններ սիրթ-անոթային և քաղցկեղային հիվանդություններ ունեցող մարդկանց օգանիզմի ինտեգրատիվ ցուցանիշների գրանցումը: Ենթադրվում է նաև շարունակել համատեղ գիտա-հետազոտական աշխատանքները ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Ա.Լ. Մնջոյանի անվան Նուրբ Օրգանական Քիմիայի Ինստիտուտի աշխատակիցների հետ կենդանիների օրգանիզմի ինտեգրատիվ վիճակի վրա տարբեր հոգեմետ նյութերի ազդեցության ուսումնասիրություն վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ շարունակվելու են աշխատանքները ԵՊՀ-ի ֆիզիոլոգիայի ամբիոնի աշխատակիցների հետ սպիտակ առնետների ինտեգրատիվ վիճակի վրա թթվածնային անբավարարվածության ազդեցության շուրջ: Նշված հետազոտությունները իրականացնելու, առկա սարքավորումների բազմացման և տեխնիկական մոդեռնիզացիայի համար անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ շուրջ \$5000: Ենթադրվող աշխատանքները կնպաստեն նոր ինտեգրատիվ մեթոդոլոգիական մոտեցման ավելի լայն կիրառմանը գիտական տարբեր հետազոտություններում:

➤ ***Մեզենքիմային ցողունային բջիջներից փոխպատվաստման համար ֆունկցիոնալ մաշկային հյուսվածքի ստացում /աճեցում:***

2019թ-ին շարունակվելու է լաբորատորիայի գիտական ուղղությունը՝ AdMSCs-ի հավաքածուի ավելացումը, ապաբջջայնացում/բջջայնացում գործընթացի բարելավումը: Այս ուսումնասիրությունները կծառայեն մի շարք նպատակներով, մասնավորապես կարգաբանական, կենսաբազմազանության պահպանման, դեղանյութերի զարգացման, ինչպես նաև կատեղծվի բջիջների հավաքածու, որոնք կարող են տարբերակվել տարբեր

օրգանների հյուսվածքների բջիջների: Մեկ այլ ուղղություն, որ կիրականացվի 2019թ-ին՝ Ad-MSC-ների իմունոմոդուլյատոր մեխանիզմների հետազոտությունն է: Այս նպատակով, հաստատվել է համագործակցություն Բելառուսի պետական համալսարանի հետ, որն ընդգրկում է փորձի փոխանակում և գիտական սարքավորումների համատեղ օգտագործում: Ինչպես նախորդ տարիներին, 2019թ-ին նույնպես լաբորատորիայի ուսումնասիրությունների գիտական արդյունքները կհրապարակվեն տեղական և միջազգային գիտական պարբերականներում, կներկայացվեն գիտաժողովներում: Ի հավելումն, ուսանողները և գիտաշխատողները հնարավորություն կունենան կատարելագործել իրենց հմտությունները և գրանցել առաջխաղացում գիտական կարիերայում:

➤ **Հոգեֆիզիոլոգիական էքսպերտիզա**

2019թ. լաբորատորիայում հետազոտությունները պետք է իրականացվեն երեք ուղղությամբ. 1. Շարունակվելու են գլխուղեղի ֆունկցիոնալ վիճակի (ՖՎ) կենսառիթմոլոգիական առանձնահատկությունների համալիր հետազոտություններն՝ ըստ պարզ (ՊՏՇՌ) և բարդ տեսա-շարժողական ռեակցիաների (ԲՏՇՌ-ընտրության ռեակցիա, շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիա) ժամանակի ուսումնասիրության: Նախատեսվում է զգայաշարժողական կարգավորման ոլորտի կարճատև տիրույթի տատանողական դինամիկայի ուսումնասիրությունը ՊՏՇՌ և ԲՏՇՌ բնութագրերի համեմատական վերլուծությամբ: 2. Բազմաֆունկցիոնալ պոլիգրաֆի կիրառմամբ կշարունակվեն մարզիկների բնավորության հոգեֆիզիոլոգիական տեսակի ուսումնասիրությունները սպորտի սպեցիֆիկային ադապտացված ինդեքսային մոդիֆիկացված համակարգի միջոցով: Կմշակվի անհատների ագրեսիվության մակարդակի և կրեատիվության ներուժի որոշման մեթոդական մոտեցումներ: Այդ ուղղությամբ հետազոտությունները պետք է իրականացվեն Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, մասնավորապես՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հետ փոխհամագործակցությամբ: 3. «PSI» ֆիրմայի հետ համատեղ կշարունակվեն բարձրզգայունակ SFCO-տվիչների կայունության և կրկնողունակության ցուցանիշների ուսումնասիրությունները, մշակված բժշկա-կենսաբանական խնդիրներում վերջիններիս կիրառության համար (նրանց «կենսաբանական կալիբրովկան»):

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան
(ստորագրություն)

Տնօրեն (ռեկտոր)՝

Մրագրի գիտական ղեկավար՝
(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան)
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

№№ ը/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը»	1. Բացահայտել օրգանիզմի շարժողական ֆունկցիոնների կենտրոնական կազմակերպման և ինտեգրատիվ ու պլաստիկական մեխանիզմները 2. Բացահայտել օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիոնների կարգավորման կենտրոնական և ծայրամասային մեխանիզմները:	1. Փորձերի կատարում առնետների, մկների, ճագարների և բջջային կուլտուրաների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական մաթեմատիկական և այլ ընտրանքային մեթոդները: 2. Փորձերի կատարում առնետների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Արդյունքների հրատարակում գրաքննվող տեղական և միջազգային հանդեսներում	31.12.2019թ.	144699,0 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն վեց հարյուր ինսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Ընդամենը

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Կազմակերպություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

Տնօրեն (ռեկտոր)

(ստորագրություն)



Ծրագրի գիտական ղեկավար

(Նաիրա Ավագյան)

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	89000	17800	22250	22250	26700
2	տնտեսական և այլ ծախսեր*	31582.5	6316.5	7895.6	7895.6	9474.8
Ընդամենը (առանց ԱԱՀ)		120582.5	24116.5	30145.6	30145.6	36174.8
ԱԱՀ		24116.5	4823.3	6029.1	6029.1	7235.0
Ընդամենը		144699.0	28939.8	36174.8	36174.8	43409.7

Կազմակերպության տնօրեն (տեկտոր)՝



(Լահրա Ավագյան)

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝



(Կարինե Հակոբյան)

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(Լահրա Ավագյան)




* Բուժերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման արևվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ արևվազն 5%-ը

Հավելված 4.1
 « 30 » 01 2018 թ.
 N 8-16 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՄԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	15050.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	7500.0
	գազի ծառայություն	4600.0
	ջրամատակարարման ծառայություն	1500.0
	կապի ծառայություն	800.0
	աղբահանություն	650.0
2	Գույք	1000.0
3	Սարքեր և սարքավորումներ	7000.0
4	Նյութեր	2200.0
5	Գործուղումներ	300.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	0
7	Արշավախմբեր	0
8	Հրատարակման ծախսեր	0
9.	Այլ	6032.5
Ընդամենը		31582.5

Կազմակերպության տնօրեն՝ Զեֆ (ստորագրություն) Նարբա Նիվաչյան (անուն ազգանուն)
 Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ Մարիան Զակարյան (ստորագրություն) (անուն ազգանուն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

“Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը” ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
Ղեկավարություն				
1	Այվազյան Նաիրա Մ.	Տնօրեն	կ.գ.դ.	180.0
2	Սադաթյան Հավհաննես Ա.	Տնտեսակ.գծով փոխտնօրեն		133.0
3	Եզանովա Վալենտինա Ս	Գիտ.քարտուղար	բ.գ.թ.	103.0
4	Հակոբյան Կարինե Գեղամի	Գլխավոր հաշվապահ		134.0
Առկա և հեռավար ուսումնական կենտրոն				
5	Ավետիսյան Էլմիրա Ա.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	74,4
6	Պետրոսյան Անահիտ Ա.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	74,4
7	Ներզոզովա Քրիստինա Ա.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
8	Մելտոնյան Աշոտ Վարազդատի	Կրտսեր գիտ.աշխատող		79,4
9	Ավազյան Արև Ա.	Ցանցային ադմինիստրատոր		40,6
ԿՆՀ Ֆիզիոլոգիայի լաբորատորիա				
10	Մանվելյան Լևոն Ռ.	Լաբորատորիայի վարիչ	թղթ.-անդամ	110.0
11	Թերզյան Դիաննա Օ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
12	Խոեցյան Նելլի Ս.	Ավագ լաբորանտ		74,4
13	Սարգսյան Աննա Վ.	Կրտսեր գիտաշխատող		79,4
14	Սադաթյան Հավհաննես Ա.	Ավագ ինժեներ		30.0
15	Մեղավորյան Ռուբեն Է.	Ինժեներ		74,4
16	Գրիգորյան Մարիամ Լ.	Կրտսեր գիտաշխատող		79,4
Զգայաշարժ ինտեգրացիայի լաբորատորիա				
17	Սարգսյան Վաղինակ Հ.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
18	Բաղդասարյան Սուսաննա Հ.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.դ.	74,4
19	Մանուկյան Լարիսա Փ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4

* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը

20	Համբարձումյան Լիլիա Է.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
21	Դարբինյան Լիլիթ Վ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
22	Շիրինյան Սարինե Է.	Կրտսեր գիտ.աշխատող		18,6
23	Ինջեյան Ազնիվ Հ.	Ավագ լաբորանտ		74,4
24	Սարգսյան Նաիրա Վ.	Լաբորանտ		40,6
ՆԷՖ լաբորատորիա				
25	Պապյան Վերգինե Ա.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
26	Նահապետյան Խաչիկ Հ.	Առաջատար գիտաշխատող	կ.գ.դ.	88,0
27	Սիմոնյան Կարեն Վ.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	88,0
28	Ավետիսյան Աստղիկ Վ.	Լաբորանտ		41,0
29	Ավետիսյան Ռիմա Ա.	Լաբորանտ		79,4
30	Իսայան Արմինե Ս.	գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
31	Ավետիսյան Լիլիթ Գ.	գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
32	Լորիկյան Անի Գ	Կրտսեր գիտ.աշխատող		79,4
Ֆունկց.կոմպենսացիայի լաբորատորիա				
33	Սարգսյան Ջոն Ս.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
34	Ավետիսյան Ջուբեյդա Ա.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	74,4
35	Ցականյան Կարեն Վ.	Ինժեներ	կ.գ.թ.	74,4
36	Պողոսյան Միխայիլ Վ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	88,0
37	Ստեփանյան Հարություն Յ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
38	Մելիքյան Լևոն Մելիքի	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
Սարդու հոգեֆիզիոլոգիայի լաբորատորիա				
39	Խաչունց Ալեքսանդր Ս.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.թ.	110,0
40	Կոստանյան Էսմա Գ.	Ավագ գիտ.աշխատող	բ.գ.թ.	38,0
41	Թաթևոսյան Իրա Գ.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	38,0
42	Թաթևոսյան Նարինե Է.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	74,4
43	Պանչոլյան Կարեն Ա.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	74,4
44	Թումանյան Անուշ Ա.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
45	Երիցյան Նաիրա Բ.	Գիտական խորհրդատու	բ.գ.թ.	18,6
Էլեկտրոնային մանրադիտման և հիստոքիմիայի լաբորատորիա				
46	Ղևոնդյան Տիգրան Հ.	Լաբորատորիայի վարիչ	բ.գ.դ.	72,7
47	Դանիելյան Սարգսիստա Հ.	գիտ.աշխատող	կ.գ.թ.	88,0
48	Նազարյան Օֆիկ Հ.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	38,0
49	Խաչատրյան Վահագն Պերճի	կրտսեր գիտ.աշխատող	բ.գ.դ.	40,6
50	Կարապետյան Քրիստինե Վ.	կրտսեր գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
51	Անտոնյան Իննա Վ.	լաբորանտ	կ.գ.թ.	79,4
Հարթ մկանների ֆիզիոլոգիայի լաբորատորիա				
52	Ղազարյան Քնարիկ Վ.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
53	Մկրտչյան Արուսյակ Վ.	կրտսեր գիտ.աշխատող		79,4

54	Հունանյան Նաիրա Ֆ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
55	Զիրուխյան Ռոզա Գ.	կրտսեր գիտ.աշխատող		79,4
56	Փիլիփոսյան Տաթևիկ Ա.	կրտսեր գիտ.աշխատող		79,4
57	Մկրտչյան Հերմինե Խաչիկի	լաբորանտ		40,0
Ինտեգրատիվ կենսաբանության լաբորատորիա				
58	Սարգսյան Ռաֆիկ Շ.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	110,0
59	Սարգսյան Վահրամ Ռ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
60	Մանուկյան Արմեն Մ.	Կրտսեր գիտ.աշխատող		74,4
61	Քարամյան Գագիկ Գ.	Ավագ գիտ.աշխատող	Ֆ.-մ.գ.թ.	38,0
62	Կոստանյան Հասմիկ Լ.	Կրտսեր գիտ.աշխատող		38,0
63	Միսակյան Լևոն Հ.	Ավագ ինժեներ		77,2
64	Դանիելյան Իրինա Ա.	Կրտսեր գիտ.աշխատող		79,4
65	Սիմոնյան Լուիզա Գ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	21,0
Ֆիզիոլոգիսպես ակտիվ նյութերի պուրիֆիկացման, սերտիֆիկացման և ստանդարտիզացման լաբորատորիա(ՖԱՆ)				
66	Ոսկանյան Արմեն Վ.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.թ.	110,0
67	Անտոնյան Մարինա Վ.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	74,4
68	Դարբինյան Աննա Ա.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
69	Քոչատաշյան Հասմիկ Ռ.	կրտսեր գիտ.աշխատող		40,6
70	Սարգսրյան Հռիփսիմե Ա.	լաբորանտ		79,4
71	Պարսեղյան Լիլյա Մ	կրտսեր գիտ.աշխատող		79,4
72	Բուռնազյան Տիգրան Ռ	Ինժեներ		74,4
Թունաբանական հետազոտությունների լաբորատորիա				
73	Այվազյան Նաիրա Մ.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.դ.	60,0
74	Կիրակոսյան Գայանե Ռ.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
75	Զաքարյան Նաիրա Ա.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
76	Թադևոսյան Հասմիկ Հ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
77	Ղազարյան Նարինե Ա.	Ավագ գիտ.աշխատող	կ.գ.թ.	65,0
78	Բարսեղյան Արամ Գ.	Ինժեներ		81,5
79	Ղուլիկյան Լուսինե Ա.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
80	Քիչմիքյան Արսեն Վ.	Գիտ.աշխատող		79,4
81	Ղուկասյան Գևորգ Վ.	Կրտսեր գիտ.աշխատող		79,4
82	Պետրոսյան Սոսե Ս.	Լաբորանտ		79,4
Իմունոլոգիայի և հյուսվածքային ինժեներիայի լաբորատորիա				
83	Կարաբեկյան Զարուհի Ի.	Լաբորատորիայի վարիչ	կ.գ.թ.	72,7
84	Գրիգորյան Վահան Ս.	Կրտսեր գիտ.աշխատող		40,6
85	Քերյան Անդրանիկ Գ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	40,6
86	Արեստակեսյան Հովհաննես Վ.	Գիտ.աշխատող	կ.գ.թ.	79,4
87	Պողոսյան Արփինե Ա.	Կրտսեր		79,4

